«ԿԱՊԻՏԱԼ ԱՍԵԹ ՄԵՆԵՋՄԵՆԹ»
ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

# 2009 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ ԵՎ ԱՅԴ ԱՄՍԱԹՎԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՍՆԵՐԿՈՒ ԱՄԻՍՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Երևան, Ամիրյան 27, թիվ 14

## ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
(ձև 5)

## 1. Ընդհանուր դրույթներ

«Կապիտալ Ասեթ Մենեջմենթ» ՓԲԸ-ն հանդիսանում է «Իկապիտալ Ասեթ Մենեջմենթ» փակ բաժնետիրական ընկերության իրավահաջորդը, որը ստեղծվել է 2005թ.:

2007 թվականի օգոստոսին Ընկերությունը վերանվանվել է «Կապիտալ Ասեթ Մենեջմենթ» փակ բաժնետիրական ընկերության:

2006թ. նոյեմբերի 23-ին Ընկերությունը ստացել է բրոքերային գործունեության և հավատարմագրային կառավարման գործունեության լիցենզիաներ, իսկ 2007 թվականի հոկտեմբերին ստացել է արտարժույթի դիլերային-բրոքերային առուվաճառքի լիցենզիա:

2008թ. հունիսի 27-ին ընկերությունը վերագրանցվել է ՀՀ ԿԲ-ում որպես ներդրումային ընկերություն և ստացել թիվ 6 լիցենզիան:

Ընկերությունն ունի երկու բաժնետեր՝ Տիգրան Կարապետյան (66.67%) և Արմեն Մկոյան (33.33%):
«Կապիտալ Ասեթ Մենեջմենթ» ՓԲԸ-ի ղեկավար մարմիններն են հանդիսանում բաժնետերերի ընդհանուր ժողովը և գլխավոր տնօրենը: Գլխավոր տնօրենի պաշտոնը զբաղեցնում է Տիգրան Կարապետյանը:
Ընկերությունը մինչ այժմ գործունեություն է իրականացրել արժեթղթերի և արտարժույթի շուկաներում՝ մասնավորապես

- իրականացրել է արժեթղթերի տեղաբաշխում,
- մատուցել է արժեթղթերի հավատարմագրային կառավարման ծառայություններ,
- հանդիսացել է արժեթղթերի բրոքեր և դիլեր,
- մատուցել է ռեեստրավարման և պահառության ծառայություններ,
- տրամադրել է խորհրդատվություն արժեթղթերի շուկայի վերաբերյալ,
- իրականացրել է արտարժույթի անկանխիկ առուվաճառքի գործառնություններ:

## 2. Հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և Պատրաստման հիմունքները

### 2.1 Համապատասխանությունը

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են ՀՀ հաշվապահական հաշվառման ստանդարտներին (ՀՀՀՀՍ), ՀՀ ԿԲ-ի կողմից հաստատված համապատասխան իրավական նորմատիվ ակտերին և ընկերության հաշվապահական հաշվառման քաղաքականությանը համապատասխան: Կիրառվել է նույն քաղաքականությունը, ինչ որ ամենավերջին տարեկան հաշվետվություններում:

Ֆինանսական հաշվետվությունները ստորագրված են 2010 թ.հունվարի 15-ին:

### 2.2 Չափման հիմունքները

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստված են չափման սկզբնական արժեքի հիմունքով, բացառությամբ առևտրական նպատակներով պահվող ֆինանսական ակտիվների, որոնք վերաչափվում են իրական արժեքով:

### 2.3 Հաշվետվական արժույթը

Հայաստանի Հանրապետության արժույթը ՀՀ դրամն է, որը Ընկերության ֆունկցիոնալ և ներկայացման արժույթն է: Ֆինանսական տեղեկատվությունը ցույց է տրվում հազար դրամներով՝ առանց ստորակետից հետո տասնորդական նիշի:

## 3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության վերաբերյալ էական տեղեկատվություն

1. Հիմնական միջոցների հետագա չափման մոտեցումները՝ սկզբնական ճանաչումից հետո հիմնական միջոցները չափվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կուտակված կորուստը:

2. Ոչ նյութական ակտիվների հետագա չափման հիմունքները՝ սկզբնական ճանաչումից հետո ոչ նյութական ակտիվները չափվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կուտակված կորուստը:

3. Էական սխալների ուղղման և հաշվապահական հաշվառման քաղաքականությունում փոփոխությունների ազդեցության արտացոլման մոտեցումները՝ նախորդ ժամանակաշրջաններին վերաբերող էական սխալների ուղղման գումարը արտացոլվում է հաշվետու ժամանակաշրջանի հաշվետվություններում՝ ճշտելով չբաշխված շահույթի սկզբնական մնացորդը: Համադրելի տեղեկատվությունը վերաներկայացվում է, քանի դեռ դա իրագործելի է:

4. Ծառայությունների մատուցման պայմանագրերի գծով հասույթի ճանաչման համար գործարքի ավարտվածության աստիճանի որոշման մոտեցումը՝ երբ ծառայության մատուցման գործարքի արդյունքները հնարավոր է արժանահավատորեն գնահատել, գործարքից հասույթը ճանաչվում է ֆինանսական հաշվետվության ամսաթվի դրությամբ գործարքի ավարտման աստիճանի հիման վրա, հակառակ դեպքում հասույթը ճանաչվում է միայն ճանաչված այն ծախսերի չափով, որոնք կփոխհատուցվեն:

5. Արտարժույթի փոխարժեքային տարբերությունների ճանաչման մոտեցումը՝ փոխարժեքային տարբերությունները, որոնք առաջանում են դրամային հոդվածների մարման արդյունքում կամ երբ դրամային հոդվածները հաշվետվության մեջ ներկայացվում են մի փոխարժեքով, որը տարբերվում է տվյալ հաշվետու ժամանակաշրջանում դրանց սկզբնական գրանցման կամ նախորդ ֆինանսական հաշվետվություններում գրանցման փոխարժեքից, ճանաչվում են որպես եկամուտ կամ ծախս այն ժամանակաշրջանում, որում դրանք առաջացել են:

6. Փոխառության ծախսումների հաշվառման մոտեցումը՝ փոխառության ծախսերը ճանաչվում են որպես ծախս այն ժամանակաշրջանում, որի ընթացքում կատարվում (հաշվեգրվում) են: Վարկերը և փոխառությունները հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով:

7. Առևտրական նպատակներով պահվող (ԱՆՊ) ֆինանսական ակտիվներ՝ ԱՆՊ ֆինանսական ակտիվները յուրաքանչյուր ամսի վերջին օրվա դրությամբ վերաչափվում են իրական արժեքով՝ իրական արժեքից առաջացող շահույթները (վնասները) ճանաչելով տվյալ ժամանակաշրջանի ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում (ՖԱՄՀ)՝ որպես այլ գործառնական եկամուտ կամ այլ գործառնական ծախս: ԱՆՊ ֆինանսական ակտիվների վաճառքի դեպքում ՖԱՄՀ-ում ներկայացվում է դրանց վաճառքից զուտ շահույթը կամ վնասը, այսինքն՝ վաճառքից ստացվող (ստացվելիք) գումարի և վաճառված ԱՆՊ ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքի տարբերությունը:

8. ՌԵՊՈ պայմանագրով ստացված և տրված արժեթղթեր՝ ՌԵՊՈ պայմանագրերով ստացված արժեթղթերը հաշվառվում են արտահաշվեկշռում՝ որպես տրամադրված փոխառությունների ապահովություն: ՌԵՊՈ պայմանագրերով ստացված արժեթղթերի դիմաց վճարված գումարները հաշվառվում են որպես տրամադրված փոխառություններ: Դրանց գծով ստացվող տոկոսները հաշվեգրման հիմունքով ճանաչվում են ՖԱՄՀ-ում և ներկայացվում այլ գործառնական եկամուտների կազմում: ՌԵՊՈ պայմանագրերով տրված արժեթղթերը հաշվառվում են հաշվեկշռում՝ իրենց բնույթին համապատասխան: ՌԵՊՈ պայմանագրերով տրված արժեթղթերի դիմաց ստացված գումարները հաշվառվում են որպես ստացված փոխառություններ: Դրանց գծով վճարվող տոկոսները հաշվեգրման հիմունքով ճանաչվում են ՖԱՄՀ-ում տոկոսային ծախսերի կազմում:

9. Արտարժույթի առք-վաճառքի եկամուտներ և ծախսեր՝ արտարժույթի առք-վաճառքի գործառնություններից ստացված զուտ շահույթը (վնասը) ներկայացվում է որպես առևտրային գործունեությունից զուտ շահույթի կամ վնասի կազմում:

10. Շահութահարկի գծով ծախսը (եկամուտը) բաղկացած է ընթացիկ հարկի գծով ծախսից և հետաձգված հարկի գծով ծախսից (եկամտից): Շահութահարկի գծով ծախսը ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, բացառությամբ այն գործարքների գծով առաջացած հարկի, որոնց արդյունքները ուղղակիորեն ճանաչվում է են սեփական կապիտալում: Վերջին դեպքում շահութահարկի գծով ծախսը նույնպես ճանաչվում է սեփական կապիտալում: Ընթացիկ հարկի գծով

ծախսը ընթացիկ տարվա հարկվող շահույթից վճարման ենթակա շահութահարկն է և նախորդ տարիների ընթացիկ հարկի ճշգրտումներ: Հետաձգված հարկի գծով ծախսը (եկամուտը) հետաձգված հարկային ակտիվների և պարտավորությունների մնացորդների փոփոխություններ արդյունքն է: Հետաձգված հարկային ակտիվները ճանաչվում են, այնքանով, որքանով հավանական է ապագա ժամանակաշրջաններում բավարար հարկվող շահույթի ստացումը, որի հաշվին կարող են օգտագործվել նվազեցվող ժամանակավոր տարբերությունները և հաջորդ ժամանակաշրջան տեղափոխվող հարկային վնասները:

## Ծանոթագրություն 3. «Տոկոսային և նմանատիպ եկամուտներ»

| Տոկոսային և նմանատիպ եկամուտներ | Հաշվետու ժամանակա-շրջան (ընթացիկ) | Հաշվետու ժամանակա-շրջան (աճողական) | Նախորդ ժամանակա-շրջան (ընթացիկ) | Նախորդ ժամանակա-շրջան (աճողական) |
|---|---|---|---|---|
| Տոկոսային եկամուտներ բանկային հաշիվներից և ներդրված ավանդներից | 1,476 | 1,486 | 5 | 1,162 |
| Տոկոսային եկամուտներ արժեթղթերից | 15,535 | 41,443 | 15,504 | 48,826 |
| Տոկոսային եկամուտներ տրված վարկերից (փոխառություններից) | | 8 | | |
| **Ընդամենը** | **17,011** | **42,937** | **15,509** | **49,988** |
| **Տոկոսային և նմանատիպ ծախսեր** | | | | |
| Տոկոսային ծախսեր ներգրավված փոխառությունների և ստացված վարկերի դիմաց | (3,508) | (7,301) | (917) | (1,129) |
| Տոկոսային ծախսեր ռեպո համաձայնագրերի գծով | (8,989) | (22,940) | (12,555) | (34,873) |
| **Ընդամենը** | **(12,497)** | **(30,241)** | **(13,472)** | **(36,002)** |
| **Զուտ տոկոսային և նմանատիպ եկամուտ** | **4,514** | **12,696** | **2,037** | **13,986** |

## Ծանոթագրություն 4. «Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ և ծախսեր»

| Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ | Հաշվետու ժամանակա-շրջան (ընթացիկ) | Հաշվետու ժամանակա-շրջան (աճողական) | Նախորդ ժամանակա-շրջան (ընթացիկ) | Նախորդ ժամանակա-շրջան (աճողական) |
|---|---|---|---|---|
| Արժեթղթերի փաթեթի կառավարման գծով միջնորդավճարներից | 4,423 | 10,410 | 679 | 679 |
| Արժեթղթերով գործարքներից միջնորդավճարներից | 31 | 160 | 62 | 74 |
| Խորհրդատվական ծառայությունների գծով միջնորդավճարներից | 10 | 330 | 900 | 900 |
| Արժեթղթերի տեղաբաշխման գծով միջնորդավժարներից | - | 1,050 | 2,940 | 3,334 |
| Պահառության գործունեությունից | 702 | 2,321 | 415 | 720 |
| **Ընդամենը** | **5,166** | **14,271** | **4,996** | **5,707** |

| **Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր** | | | | |
|---|---|---|---|---|
| Միջնորդավճարների գծով ծախսեր | (408) | (1,116) | (269) | (665) |
| **Ստացված զուտ կոմիսիոն և այլ վճարներ** | **4,758** | **13,155** | **4,727** | **5,042** |

## Ծանոթագրություն 5. «Եկամուտ շահաբաժիններ»

Ընկերությունը շահաբաժնային եկամուտներ չունի:

## Ծանոթագրություն 6. «Զուտ եկամուտ առևտրային գործառնություններից»

| Առևտրական նպատակներով պահվող ներդրումներից | Հաշվետու ժամանակա-շրջան (ընթացիկ) | Հաշվետու ժամանակա-շրջան (աճողական) | Նախորդ ժամանակա-շրջան (ընթացիկ) | Նախորդ ժամանակա-շրջան (աճողական) |
|---|---|---|---|---|
| Առևտրական նպատակներով պահվող ներդրումների առք ու վաճառքից զուտ եկամուտ | 1,449 | 3,246 | 3,232 | 4,607 |
| Առևտրական նպատակներով պահվող ներդրումների իրական արժեքի փոփոխությունից զուտ եկամուտ | 226 | 2,278 | 11,813 | 12,176 |
| **Ընդամենը** | **1,675** | **5,524** | **15,045** | **16,783** |

| Արտարժութային գործառնություններից | Հաշվետու ժամանակա-շրջան (ընթացիկ) | Հաշվետու ժամանակա-շրջան (աճողական) | Նախորդ ժամանակա-շրջան (ընթացիկ) | Նախորդ ժամանակա-շրջան (աճողական) |
|---|---|---|---|---|
| Արտարժույթի առք ու վաճառքից ստացված զուտ եկամուտ | (266) | (574) | 6 | 250 |
| Արտարժույթի վերագնահատումից ստացված զուտ եկամուտ | 782 | 3,154 | 3 | 21 |
| Ընդամենը | **516** | **2,580** | **9** | **271** |
| **Ընդամենը զուտ եկամուտ առևտրային գործառնություններից** | **2,191** | **8,104** | **15,054** | **17,054** |

## Ծանոթագրություն 7. «Այլ գործառնական եկամուտ»

| Այլ գործառնական եկամուտ | Հաշվետու ժամանակա-շրջան (ընթացիկ) | Հաշվետու ժամանակա-շրջան (աճողական) | Նախորդ ժամանակա-շրջան (ընթացիկ) | Նախորդ ժամանակա-շրջան (աճողական) |
|---|---|---|---|---|
| Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների օտարումից ստացված զուր եկամուտ | - | - | 15 | 15 |
| **Ընդամենը** | **-** | **-** | **15** | **15** |

## Ծանոթագրություն 8. «Զուտ մասհանումներ ակտիվների հնարավոր կորուստների պահուստներին»

Ընկերությունը զուտ ակտիվների հնարավոր կորուստների պահուստին մասհանումներ հաշվետու և նախորդ ժամանակաշրջաններում չի իրականացրել:

## Ծանոթագրություն 9. «Ընդհանուր վարչական ծախսեր»

| Ընդհանուր վարչական ծախսեր | Հաշվետու ժամանակաշրջան (ընթացիկ) | Հաշվետու ժամանակաշրջան (աճողական) | Նախորդ ժամանակաշրջան (ընթացիկ) | Նախորդ ժամանակաշրջան (աճողական) |
|---|---|---|---|---|
| Ծախսեր հաշվարկված աշխատավարձի և դրան հավասարեցված այլ վճարումների գծով | (3,906) | (13,763) | (4,342) | (12,994) |
| Ծախսեր սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամին հատկացումների գծով | (528) | (1,998) | (597) | (1,856) |
| Գործուղման և ուսուցման գծով ծախսեր | (1,594) | (1,594) | (1,013) | (1,013) |
| Գործառնական վարձակալության գծով ծախսեր | (2,400) | (9,600) | (1,260) | (2,520) |
| Ներդրումային ընկերության շենքի և սարքավորումների, փոխադրամիջոցների տեխնիկական սպասարկման և պահպանման գծով ծախսեր | (223) | (1,012) | (338) | (338) |
| Աուդիտի և այլ խորհրդատվական ծառայությունների գծով ծախսեր | (1,510) | (4,473) | (810) | (2,410) |
| Կապի և հաղորդակցման միջոցների գծով ծախսեր | (333) | (1,145) | (382) | (1,168) |
| Գրասենյակային և կազմակերպչական ծախսեր | (288) | (881) | (117) | (318) |
| Չփոխհատուցվող հարկեր և տուրքեր | (1,410) | (3,645) | (574) | (1,641) |
| Այլ վարչական ծախսեր | - | (1,248) | (630) | (711) |
| **Ընդամենը** | **(12,192)** | **(39,359)** | **(10,063)** | **(24,969)** |

2009 թ. միջին ամսական աշխատողների թիվը եղել է 10, իսկ մեկ աշխատողին բաժին ընկնող միջին աշխատավարձը՝ 112 հազ. դրամ (2008-ի համար՝ աշխատողների թիվը՝ 9 և մեկ աշխատողին բաժին ընկնող միջին ամսական աշխատավարձը՝ 119,000 հազ. դրամ):

## Ծանոթագրություն 10. «Այլ գործառնական ծախսեր»

| Այլ գործառնական ծախսեր | Հաշվետու ժամանակաշրջան (ընթացիկ) | Հաշվետու ժամանակաշրջան (աճողական) | Նախորդ ժամանակաշրջան (ընթացիկ) | Նախորդ ժամանակաշրջան (աճողական) |
|---|---|---|---|---|
| Հասարակական կապերի գծով ծախսեր | (135) | (405) | - | - |
| Հիմնական միջոցների ամորտիզացիոն ծախսեր | (498) | (1,981) | (269) | (729) |
| Ոչ նյութական ակտիվների | (34) | (137) | (34) | (82) |

| | | | | |
|---|---|---|---|---|
| ամորտիզացիոն ծախսեր | | | | |
| Այլ ծախսեր | - | (109) | (256) | (256) |
| **Ընդամենը** | **(667)** | **(2,632)** | **(559)** | **(1,067)** |

## Ծանոթագրություն 11. «Այլ անձանց կանոնադրական կապիտալում ներդրումներից զուտ շահույթ(վնաս)»

«Այլ անձանց կանոնադրական կապիտալում ներդրումներից զուտ շահույթ(վնաս)» ընկերությունը չի ունեցել :

## Ծանոթագրություն 12. «Շահութահարկի գծով ծախս»

| <u>Շահութահարկի գծով ծախս</u> | Հաշվետու ժամանակաշրջան (անողական) | Նախորդ ժամանակաշրջան (անողական) |
|---|---|---|
| Ընթացիկ հարկի գծով ծախս | - | - |
| Հետաձգված հարկի գծով ծախս(Եկամուտ) | (1,798) | 1,550 |
| **Ընդամենը** | **(1,798)** | **1,550** |

**Շահութահարկի գծով ծախսի և հաշվապահական շահույթի միջև փոխկապակցվածությունը.**

| | Հաշվետու ժամանակա-շրջան (անողական) | Արդյունավետ դրույքաչափ (%) | Նախորդ ժամանա-կաշրջան (անողական) | Արդյունավետ դրույքաչափ (%) |
|---|---|---|---|---|
| Շահույթը մինչև հարկումը | (8,037) | - | 10,061 | - |
| Շահութահարկ՝ դրույքաչափով | (1,607) | 20.00 | 2,012 | 20 |
| Չհարկվող եկամուտներ | (631) | 7.85 | (21) | 0.26 |
| Չնվազեցվող ծախսեր | 22 | (0.27) | | |
| Նախորդ տարվա հետաձգված հարկի ճշտում | 418 | (5.2) | | |
| Նախորդ տարվա հաշվարկված հարկային ծախսի (եկամուտի) ճշտում | - | | 441 | 5.48 |
| Շահութահարկի գծով ծախս | (1,798) | 22.38 | 1,550 | 25.74 |

3.11.3. Ժամանակավոր տարբերությունների գծով հետաձգված հարկի հաշվարկը.

| | Մնացորդը նախորդ ժամանակաշրջանի դրությամբ | Ֆինանսական արդյունքներով ճանաչված | Սեփական կապիտալում ճանաչված | Մնացորդը հաշվետու ժամանակա-շրջանի դրությամբ |
|---|---|---|---|---|
| ***Հետաձգված հարկային ակտիվներ, այդ թվում՝*** | **287** | **154** | **-** | **441** |
| Այլ ակտիվների գծով | 48 | (48) | | 0 |
| Ստեղծված պահուստների գծով | 239 | 202 | | 441 |
| | | | | |
| ***Հետաձգված հարկային պարտավորություններ, այդ*** | **(1,934)** | **(635)** | | **(2,569)** |

| | | | | |
|---|---|---|---|---|
| *թվում՝* | | | | |
| Առևտրական նպատակներով պահվող արժեթղթերի գծով | (1,754) | (815) | | (2,569) |
| Այլ ակտիվների գծով | (180) | 180 | | |
| | | | | |
| ***Զուտ հետաձգված հարկային ակտիվ/պարտավորու-թյուն*** | **(1,647)** | **(481)** | **-** | **(2,128)** |
| ***Հաջորդ ժամանակաշրջան տեղափոխվող հարկային վնաս*** | **97** | **2,279** | | **2,376** |
| ***Ընդամենը զուտ հետաձգված հարկի շարժը*** | **(1,550)** | **1,798** | **-** | **248** |

## Ծանոթագրություն 13. «Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային շահույթ»

Ծանոթագրություն 13-ում բացահայտվում է մեկ բաժնետոմսին բաժին ընկնող շահույթի հաշվարկման (հաշվարկման բանաձևերում որպես համարիչ և հայտարար օգտագործվող գումարների) վերաբերյալ տեղեկատվությունը՝ համաձայն ՀՀՀՀՍ 33 «Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող շահույթ» ստանդարտի : Բացահայտումները ներկայացվում են նաև այն դեպքում, երբ բացահայտվող գումարները բացասական են (մեկ բաժնետոմսին բաժին ընկնող վնաս):

| <u>Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային շահույթ</u> | **Հաշվետու ժամանակա-շրջան** (ընթացիկ) | **Հաշվետու ժամանակա-շրջան** (աճողական) | **Նախորդ ժամանակա-շրջան** (ընթացիկ) | **Նախորդ ժամանակա-շրջան** (աճողական) |
|---|---|---|---|---|
| Հաշվետու ժամանակաշրջանի զուտ շահույթ հարկումից հետո | (863) | (6,239) | 9,660 | 8,511 |
| Տվյալ հաշվետու ժամանակաշրջանի համար հաշվարկված շահաբաժիններ արտոնյալ բաժնետոմսերի գծով | - | - | - | - |
| Սովորական բաժնետոմսերի սեփականատերերին վերագրվող տվյալ ժամանակաշրջանի զուտ շահույթ (վնաս) | (863) | (6,239) | 9,660 | 8,511 |
| Տվյալ ժամանակաշրջանի ընթացքում շրջանառության մեջ գտնվող սովորական բաժնետոմսերի կշռված միջին թիվը | 15,000 | 15,000 | 15,000 | 15,000 |
| Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային շահույթ | (0.058) | (0.416) | 0.644 | **0.567** |
| Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող նոսրացված շահույթ | **(0.058)** | (0.416) | **0.644** | **0.567** |

## Ծանոթագրություն 14 «Կանխիկ դրամական միջոցներ և մնացորդներ ՀՀ կենտրոնական բանկում»

### 14.1. «Կանխիկ դրամական միջոցներ, դրանց համարժեքներ և մնացորդներ ՀՀ կենտրոնական բանկում»

| <u>Կանխիկ դրամական մջոցներ, դրանց համարժեքներ և մնացորդներ ՀՀ կենտրոնական բանտում</u> | Հաշվետու ամսաթիվ | Նախորդ տարեվերջ |
|---|---|---|

| | | |
|---|---|---|
| Կանխիկ դրամական միջոցներ և մնացորդներ ՀՀ կենտրոնական բանկում | 1 | - |

14.2. **«Դրամական միջոցների և դրանց համարժեքների կազմը»**

| | Հաշվետու ամսաթիվ | Նախորդ տարեվերջ |
|---|---|---|
| Դրամական միջոցներ ՀՀ կենտրոնական բանկում | 1 | - |
| Ընթացիկ հաշիվներ ՀՀ բանկերում | 6,737 | 5,193 |
| **Ընդամենը** | **6,738** | **5,193** |

**14.3.** Դրամական միջոցների և դրանց համարժեքների մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի սկզբում կազմել է 5,193 հազ. ՀՀ դրամ(նախորդ հաշվետու ժամանակաշրջանի սկզբում 10,052 հազ. ՀՀ դրամ) : Հաշվետու և նախորդ հաշվետու ժամանակաշրջաններում զուտ աճը(նվազումը) համապատասխանաբար կազմել է 1,544 և (4,858) հազ. ՀՀ դրամ : Արտարժույթի փոխարժեքի փոփոխության ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա եղել է 484 հազ. և 19 հազ. ՀՀ դրամ՝ ըստ հաշվետու և նախորդ ժամանակաշրջանների : Մնացորդը հաշվետու և նախորդ ժամանակաշրջանների վերջում կազմել է 6,738 և 5,193 հազ. ՀՀ դրամ :

## Ծանոթագրություն 15. «Պահանջներ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ»

| Ընթացիկ հաշիվներ | Հաշվետու ամսաթիվ | Նախորդ տարեվերջ |
|---|---|---|
| ՀՀ բանկերում | 6,737 | 5,193 |
| Ընդամենը | **6,737** | **5,193** |
| Վարկեր (տրամադրված փոխառություններ) և ավանդներ, այլ պահանջներ | 340,101 | - |
| Հաշվեգրած տոկոսներ | 1,455 | - |
| Ընդամենը | **348,293** | |
| Բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջների գծով հնարավոր կորուստների պահուստ (ծանոթ. 8) | (-) | (-) |
| **Զուտ պահանջներ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ** | **348,293** | **5,193** |

## Ծանոթագրություն 16. «Պահանջներ հաճախորդների նկատմամբ»

Ընկերությունը հաճախորդներին տրամադրված վարկեր կամ փոխառություններ չունի :

**Ծանոթագրություն 17. «Առևտրական նպատակով պահվող ֆինանսական ակտիվներ»**

| Պետական արժեթղթեր | Հաշվետու ամսաթիվ | Նախորդ տարեվերջ |
|---|---|---|
| **ՀՀ պետական արժեթղթեր, այդ թվում՝** | 521,204 | 415,036 |
| գանձապետական պարտատոմսեր | 521,204 | 415,036 |
| **Ընդամենը պետական արժեթղթեր** | **283,262** | **415,036** |
| Այդ թվում՝ ՀՀ բանկերին ռեպո համաձայնագրով վաճառված | 514,897 | 412,919 |

| ՀՀ ոչ պետական արժեթղթեր | Հաշվետու ամսաթիվ | | Նախորդ տարեվերջ | |
|---|---|---|---|---|
| | *ցուցակված* | *չցուցակված* | *ցուցակված* | *չցուցակված* |
| **ԲԲԲ+/Բաա1/ և ցածր վարկանիշ ունեցող, այլ վարկանիշ ունեցող և վարկանիշ չունեցող թողարկողի** | | | | |
| երկարաժամկետ պարտքային գործիքներ | 235,596 | | 156,653 | 27,722 |
| **Ընդամենը ՀՀ ոչ պետական առևտրային նպատակով պահվող արժեթղթեր** | **235,596** | | **156,653** | **27,722** |
| Այդ թվում՝ ՀՀ բանկերին ռեպո համաձայնագրով վաճառված | 148,733 | | - | - |
| **Ընդամենը առևտրական նպատակով պահվող ֆինանսական ակտիվներ** | **756,799** | | **569,572** | **27,722** |

**Ծանոթագրություն 18. «Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ»**

Ընկերությունը «Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ» չունի :

**Ծանոթագրություն 19. «Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ»**

Ընկերությունը «Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ» չունի :

**Ծանոթագրություն 20. «Ներդրումներ այլ անձանց կանոնադրական կապիտալում»**

Ընկերությունը «Այլ անձանց կանոնադրական կապիտալում ներդրումներ» չունի :

**Ծանոթագրություն 21. «Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ»**

**Հիմնական միջոցներ**

| Հոդվածի անվանումը | Համակ. և կապի միջոցներ | Այլ հիմն. միջոցներ | Ընդամենը |
|---|---|---|---|
| Սկզբնական արժեք | | | |
| **Մնացորդը նախորդ եռամսյակի սկզբում** | **4,355** | **5,525** | **9,880** |
| Ավելացում | - | - | - |

| | | | |
|---|---|---|---|
| **Մնացորդը նախորդ եռամսյակի վերջում** | **4,355** | **5,525** | **9,880** |
| Ավելացում | - | 202 | - |
| **Մնացորդը հաշվետու եռամսյակի վերջում** | **4,355** | **5,727** | **10,082** |
| <u>Կուտակված մաշվածություն</u> | | | |
| **Մնացորդը նախորդ եռամսյակի սկզբում** | **1,218** | **683** | **1,901** |
| Ավելացում | 217 | 281 | 498 |
| Օտարում | - | - | - |
| **Մնացորդը նախորդ եռամսյակի վերջում** | 1,435 | 964 | 2,399 |
| Ավելացում | 217 | 280 | 497 |
| Մնացորդ հաշվետու **եռամսյակի** վերջում | 1,652 | 1,244 | 2,895 |
| <u>**Զուտ հաշվեկշռային արժեք**</u> | | | |
| հաշվետու **եռամսյակի** վերջում | 2,703 | 4,484 | 7,187 |
| նախորդ հաշվետու **եռամսյակի** վերջում | 2,920 | 4,561 | 7,481 |

<u>**Ոչ նյութական ակտիվներ**</u>

| | Համակարգչային ծրագրեր | Այլ ոչ նյութական ակտիվներ | Ընդամենը |
|---|---|---|---|
| <u>**Սկզբնական արժեք**</u> | | | |
| **Մնացորդը նախորդ եռամսյակի սկզբում** | **165** | **520** | **685** |
| **Մնացորդը նախորդ եռամսյակի վերջում** | **165** | **520** | **685** |
| **Մնացորդը հաշվետու եռամսյակի վերջում** | **165** | **520** | **685** |
| <u>**Կուտակված ամորտիզացիա**</u> | | | |
| Մնացորդը նախորդ **եռամսյակի** սկզբում | 58 | 103 | 161 |
| Ավելացում | 8 | 26 | 34 |
| Մնացորդը նախորդ **եռամսյակի** վերջում | 66 | 129 | 195 |
| Ավելացում | 8 | 26 | 34 |
| Մնացորդը հաշվետու **եռամսյակի** վերջում | 74 | 155 | 229 |
| <u>**Զուտ հաշվեկշռային արժեք**</u> | | | |
| **Հաշվետու եռամսյակի վերջում** | 91 | 365 | 456 |
| **Նախորդ հաշվետու եռամսյակի վերջում** | 99 | 391 | 490 |

**Ծանոթագրություն 22. «Հետաձգված հարկային ակտիվներ»**

Տես՝ ծանոթագրություն 12:

**Ծանոթագրություն 23. «Այլ ակտիվներ»**

| <u>Դեբիտորական պարտքեր և կանխավճարներ</u> | Հաշվետու ամսաթիվ | Նախորդ տարեվերջ |
|---|---|---|
| Դեբիտորական պարտքեր բյուջեի գծով | 13 | 32 |
| Դեբիտորական պարտքեր հաճախորդների գծով | 3,109 | 1,011 |
| Կանխավճարներ աշխատակիցներին | - | 2 |
| Կանխավճարներ մատակարարներին | 360 | 35 |
| Կանխավճարներ բյուջեի և պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների գծով | 124 | 68 |
| Այլ դեբիտորական պարտքեր և կանխավճարներ | 1,765 | 735 |
| **Ընդամենը** | **5,371** | **1,883** |
| <u>Այլ ակտիվներ</u> | | |
| Ապագա ժամանակաշրջանի ծախսեր | 25 | 25 |
| Այլ ակտիվներ | 190 | 282 |
| **Ընդամենը այլ ակտիվներ** | **215** | **307** |

**Ծանոթագրություն 24. «Պարտավորություններ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ»**

| <u>Ներգրավված փոխառություններ և ավանդներ, այլ</u> | Հաշվետու ամսաթիվ | Նախորդ տարեվերջ |
|---|---|---|
| **ՀՀ բանկեր** | | |
| Ավանդներ և փոխառություններ | 340,101 | 41,000 |
| Ռեպո համաձայնագրեր | 619,715 | 412,109 |
| **Հաշվեգրված տոկոսներ** | 3,412 | 891 |
| **Ընդամենը** | **963,228** | **454,000** |

**Ծանոթագրություն 25. «Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ»**

Ընկերությունը հաճախորդների նկատմամբ պարտավորությունների չունի չունի :

**Ծանոթագրություն 26. «Առևտրական նպատակներով պահվող պարտավորություններ»**

Ընկերությունը առևտրական նպատակներով պահվող պարտավորություններ չունի :

**Ծանոթագրություն 27. «Ներդրումային ընկերության կողմից թողարկված արժեթղթեր»**

Ընկերությունը թողարկված արժեթղթեր չունի :

**Ծանոթագրություն 29. «Պահուստներ»**

**Ծանոթագրություն 29-ում բացահայտվում են հաշվետու ժամանակաշրջանում պահուստների շարժը.**

| Պահուստներ | Հաշվետու ժամանակաշրջան | Նախորդ ժամանակաշրջան |
|---|---|---|
| **Սկզբնական մնացորդ** | **1,193** | **80** |
| Պահուստին կատարված մասհանումներ | 2,659 | 1,113 |
| Պահուստի օգտագործում | (1,649) | - |
| Պահուստին կատարված զուտ մասհանումներ | (1,010) | |
| **Վերջնական մնացորդ** | **2,203** | **1,193** |
| Արձակուրդայինի գծով | 1,203 | 893 |
| Աուդիտի գծով | 1,000 | 300 |

Երկու պահուստների գծով էլ ընկերությունն ունի իրավական պարտականություն: Դրանց արդյունքում դրամական հոսքերի արտահոսքերն ակնկալվում են տարվա ընթացքում և հաջորդ աուդիտի ժամանակ: Հաշվի առնելով կարճաժամկետ և ոչ էական լինելը, պահուստների գումարը որոշվել է առանց զեղչման:

Ընկերությունը պահուստավորում պահանջող այլ իրավական կամ կառուցողական պարտականություններ չունի: Ընկերության հանդեպ որևէ իրավական հայց հարուցված չկա: Ընկերությունն ամբողջությամբ կատարել է իր հարկային պարտավորությունները, և իր հարկային պարտավորությունների գծով լրացուցիչ պահուստավորումների անհրաժեշտություն չկա:

**Ծանոթագրություն 30. «Այլ պարտավորություններ»**

| Այլ պարտավորություններ | Հաշվետու ամսաթիվ | Նախորդ տարեվերջ |
|---|---|---|
| Կրեդիտորական պարտքեր բյուջեի գծով՝ | | |
| ԱԱՀ-ի գծով | 57 | |
| այլ հարկերի ու տուրքերի գծով | 206 | 131 |
| սոցիալական ապահովագրության վճարումների գծով | 286 | |
| Պարտավորությունների աշխատակիցների նկատմամբ աշխ. գծով | - | - |
| Կրեդիտորական պարտքեր մատակարարների նկատմամբ | 241 | 792 |
| Այլ պարտավորություններ | 71 | 51 |
| Մնացորդը ժամանակաշրջանի վերջում | **861** | **974** |

**Ծանոթագրություն 31. «Կանոնադրական կապիտալ»**

Ընկերության կանոնադրական կապիտալը 150,000 հազ. ՀՀ դրամ է, որը կազմում է 15,000 (տասնհինգ հազար) հատ տեղաբաշխված սովորական անվանական բաժնետոմս, որոնցից

յուրաքանչյուրի անվանական արժեքը կազմում է 10,000 (տաս հազար) ՀՀ դրամ: Ընկերության տեղաբաշխված բաժնետոմսերը լրիվ վճարված են:

Ընկերության հայտարարված բաժնետոմսերի քանակը կազմում է 30,000(երեսուն հազար) հատ բաժնետոմս:

Ընկերության հայտարարած արտոնյալ բաժնետոմսերի քանակը կազմում է 3,000 (երեք հազար) հատ բաժնետոմս: Արտոնյալ բաժնետոմսերի անվանական արժեքը 100,000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ է:

| **Նշանակալից մասնակցի անունը,ազգանունը/անվանումը** | **Ներդրումային ընկերությունում ունեցած մասնակցության գումարը** | **Ներդրումային ընկերությունում ունեցած մասնակցության չափը տոկոսային հարաբերությամբ** |
|---|---|---|
| Արմեն Մկոյան | 50,000 | 33,3% |
| Տիգրան Կարապետյան | 100,000 | 67,7% |

## Ծանոթագրություն 35. « Կապիտալի այլ տարրեր»

Կապիտալի այլ՝ չբացահայտված տարրեր չկան:

## Ծանոթագրություն 36. «Գործարքներ կապակցված կողմերի հետ»

Կազմակերպության փոխկապակցված կողմ է հանդիսանում «Էլիտ Գրուպ» ՓԲԸ-ն, որի բաժնետերը հանդիսանում է նաև Կազմակերպության բաժնետեր: «Էլիտ Գրուպ» ՓԲԸ-ի հետ եռամսյակի ընթացքում կատարվել են հետևյալ գործարքները.

- «Էլիտ Գրուպ» ՓԲԸ-ին մատուցվել է ռեեստրավարման ծառայություն՝ ամսական 2400 ՀՀ դրամ արժեքով (ներառյալ՝ ԱԱՀ-ն),
- «Էլիտ Գրուպ» ՓԲԸ-ի հետ կնքվել է անշարժ գույքի վարձակալության պայմանագիր՝ ամսական 960000 ՀՀ դրամ արժեքով (ներառյալ՝ ԱԱՀ-ն), համաձայն որի Կազմակերպությունը Ամիրյան 27/14 հասցեում վարձակալել է գրասենյակային տարածք,
- 2009թ.-ի փետրվարին Արմեն Մկոյանի հետ կնքվել է արժեթղթերի հավատարմագրային կառավարման պայմանագիր, համաձայն որի՝ վերջինս Ընկերության կառավարմանն է հանձնել 473,175 հազար ՀՀ դրամ, որը ներդրվել է «Էլիտ Գրուպ» ՓԲԸ-ի անվանական արժեկտրոնային պարտատոմսերում, որից 2009 թվականի ընթացքում հանվել է 105 մլն ՀՀ դրամ: 2009 թվականի ընթացքում հավատարմագրային կառավարիչի վարձը և պարգևավճարը միասին կազմել է 5,284 հազ. ՀՀ դրամ:

31.12.09թ. դրությամբ առկա է 1,2 հազ. ՀՀ դրամ դեբիտորական պարտք «Էլիտ Գրուպ» ՓԲԸ-ին ռեեստրիհամար: Նախորդ ժամանակաշրջանի նույն ամսաթվի դրությամբ առկա է եղել 1,2 հազ. ՀՀ դրամ դեբիտորական պարտք ռեեստրի վարման շրջանակներում «Էլիտ Գրուպ» ՓԲԸ-ին քաղվածքի տրամադրման համար և 504,0 հազ ՀՀ դրամ կրեդիտորական պարտք Ամիրյան 27 թիվ 14 գրասենյակի վարձակալության համար:

## Ծանոթագրություն 37. «Ֆինանսական ռիսկերի վերաբերյալ նվազագույն բացահայտումներ»

### 37.1 Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկը այն ռիսկն է, որ ֆինանսական գործիքի (ակտիվների) կողմը չի կատարի իր պարտականությունը, և այդ պատճառով ընկերությունը կկրի ֆինանսական կորուստներ:

**Պարտքային ռիսկի վերլուծություն**

**Հաշվետու ամսաթիվ**

| Հոդվածի անվանումը | ՀՀ | Այլ երկրներ | Ընդամենը |
|---|---|---|---|
| **Ակտիվներ** | | | |
| Կանխիկ դրամական միջոցներ մնացորդներ ՀՀ ԿԲ-ում | 1 | | 1 |
| Պահանջներ բանկերի և այլ ֆին. կազմ. նկատմամբ | 348,294 | | 612 |
| Առևտրային նպատակով պահվող ֆինանսական գործիքներ | 756,799 | | 463,064 |
| **Ընդամենը ակտիվներ** | **1,105,093** | | **463,677** |
| **Պարտավորություններ** | | | |
| Պարտավորություններ բանկերի և այլ ֆին. կազմ. նկատմամբ | 963,228 | | 327,421 |
| Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ | - | - | - |
| **Ընդամենը պարտավորություններ** | **963,228** | | **327,421** |
| **Զուտ դիրք** | **141,865** | | **136,257** |

**Նախորդ տարեվերջ**

| Հոդվածի անվանումը | ՀՀ | Այլ երկրներ | Ընդամենը |
|---|---|---|---|
| **Պահանջներ բանկերի և այլ ֆին. կազմ. նկատմամբ** | 6,093 | | 6,093 |
| **Առևտրային նպատակով պահվող ֆինանսական գործիքներ** | 599,411 | | 599,411 |
| **Ընդամենը ակտիվներ** | 605,504 | | 605,504 |
| **Պարտավորություններ** | | | |
| Պարտավորություններ բանկերի և այլ ֆին. կազմ. նկատմամբ | 454,000 | | 454,000 |
| **Ընդամենը պարտավորություններ** | 454,000 | | 454,000 |
| **Զուտ դիրք** | 151,504 | | 151,504 |

## 37.2 Շուկայական ռիսկ

**Շուկայական ռիսկի վերլուծություն**

Շուկայական ռիսկը հավանականությունն է, որ շուկայական տատանումների հետևանքով, մասնավորապես, առևտրական նպատակով պահվող ֆինանսական գործիքների ապագա իրական արժեքների փոփոխությամբ ընկերությունը կկրի վնասներ:

Շուկայական ռիսկի կառավարման նպատակն է առավելագույնս նվազագույնի հասցնել անորոշութան դաշտը, որը հնարավորություն կտա կրճատել ռիսկին ենթարկվածության աստիճանը՝ միաժամանակ ապահովելով ռիսկայնության տվյալ մակարդակի հիմնավորվածությունը:

## 37.3 Արտարժույթի ռիսկ

Ընկերությունն ունի ԱՄՆ դոլարով արտահայտված երկու փոխառություն 400 հազար և 500 հազար ԱՄՆ դոլար գումարներով, որոնց մարման ժամկետները համապատասխանաբար 2010թ. փետրվարը և հունիսը: Սակայն Ընկերությունն ըստ էության ենթարկված չէ արտարժութային ռիսկին, քանի որ միաժամանակ այն ունի նույն արժույթով, նույն գումարներով և նույն ժամկետներով ժամկետային ավանդներ:

*Հաշվետու ամսաթիվ*

| | ՀՀ դրամ | I խմբի արտարժույթ | Ընդամենը |
|---|---|---|---|
| Ակտիվներ | | | |
| Կանխիկ դրամական միջոցներ և մնացորդներ ՀՀ ԿԲ-ում | 1 | | 1 |
| Պահանջներ բանկերի և այլ ֆին. կազմ. նկատմամբ | 6,641 | 341,653 | 348,293 |
| Առևտրական նպատակով պահվող ֆինանսական գործիքներ | 756,799 | | 756,799 |
| ***Ընդամենը ակտիվներ*** | **763,440** | **341,653** | **1,105,093** |
| Պարտավորություններ | | | |
| Պարտավորություններ բանկերի և այլ ֆին. կազմ. նկատմամբ | 621,386 | 341,841 | 963,228 |
| Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ | - | - | - |
| ***Ընդամենը պարտավորություններ*** | **621,386** | **341,841** | **963,228** |
| **Զուտ դիրք** | **142,054** | **(189)** | **141,865** |

*Նախորդ տարեվերջ*

| Հոդվածի անվանումը | ՀՀ դրամ | I խմբի արտարժույթ | Ընդամենը |
|---|---|---|---|
| Ակտիվներ | | | |
| Կանխիկ դրամական մջջոցներ և մնացորդներ ՀՀ ԿԲ-ում | | | |
| Պահանջներ բանկերի և այլ ֆին. կազմ. նկատմամբ | 6,005 | 88 | 6,093 |
| Առևտրական նպատակով պահվող ֆինանսական գործիքներ | 599,411 | | 599,411 |
| *Ընդամենը ակտիվներ* | 605,416 | 88 | 605,504 |
| Պարտավորություններ | | | |
| Պարտավորություններ բանկերի և այլ ֆին. կազմ. նկատմամբ | 454,000 | | 454,000 |
| *Ընդամենը պարտավորություններ* | 454,000 | | 454,000 |
| Զուտ դիրք | 151,416 | 88 | 151,504 |

**37.4.Տոկոսադրույքի ռիսկ** Հաշվետու ամսաթիվ

| Հոդվածի անվանումը | մինչև 1 ամիս | | 1-իցմինչև 3 ամիս | | 3-ից մինչև 6 ամիս | | 6-ից մինչև 1 տարի | | 1-ից մինչև 5 տարի | | 5 տարուց ավելի | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Տեղաբաշխված միջոցներ | դրամով | արտարժույթով | դրամով | արտարժույթով | դրամով | արտարժույթով | դրամով | արտարժույթով | դրամով | արտարժույթով | դրամով | արտարժույթով |
| Պահանջներ բանկերի և այլ ֆին. կազմ. նկատմամբ, այդ թվում՝ | | | | 152,357 | | | | 189,199 | | | | |
| -ավանդներ | | | | 152,357 | | | | 189,199 | | | | |
| Առևտրային նպատակով պահվող և վաճառքի համար մատչելի արժեթղթեր, այդ թվում՝ | - | - | *13,767* | - | - | - | 20,134 | - | 466,043 | - | 211,398 | - |
| - երկարաժամկետ պարտք. գործիքներ | - | - | - | - | - | - | 20,134 | - | 466,043 | - | 211,398 | - |
| -կարճաժամկետ պարտք. գործիքներ | - | - | *13,767* | - | - | - | - | - | - | - | - | - |
| Ընդամենը | **-** | **-** | ***13,767*** | ***152,357*** | **-** | **-** | ***20,134*** | ***189,199*** | ***466,043*** | | **211,398** | **-** |
| Պարտավորություններ բանկերի և այլ ֆին. կազմ.-ների նկատմամբ, այդ թվում՝ | 475,393 | - | 145,993 | 152,607 | - | - | - | 189,235 | - | - | - | - |
| - վարկեր | - | - | - | 152,607 | - | - | - | 189,235 | - | - | - | - |
| -ռեպո համաձայնագրեր | 475,393 | - | 145,993 | - | - | - | - | - | - | - | - | - |
| Ընդամենը | ***475,393*** | **-** | ***145,993*** | ***152,607*** | **-** | **-** | **-** | ***189,235*** | **-** | **-** | **-** | **-** |
| Զուտ դիրք | ***(475,393)*** | **-** | ***(132,226)*** | *(250)* | **-** | **-** | ***20,134*** | *(36)* | ***466,043*** | **-** | **211,398** | **-** |

Նախորդ տարեվերջ

| Հոդվածի անվանումը | մինչև 1 ամիս | | 1-ից մինչև 5 տարի | | 5 տարուց ավելի | |
|---|---|---|---|---|---|---|
| Տեղաբաշխված միջոցներ | դրամով | արտարժույթով | դրամով | արտարժույթով | դրամով | արտարժույթով |
| Առևտրային նպատակով պահվող և վաճառքի համար մատչելի արժեթղթեր, այդ թվում` | - | - | 184,375 | - | 368,822 | - |
| - երկարաժամկետ պարտք. գործիքներ | - | - | 184,375 | - | 368,822 | - |
| Ընդամենը | **-** | **-** | ***184,375*** | **-** | **368,822** | **-** |
| Պարտավորություններ բանկերի և այլ ֆին.   կազմ.-ների նկատմամբ, այդ թվում` | 454,000 | - | - | - | - | - |
| - վարկեր | 41,504 | - | - | - | - | - |
| -ռեպո համաձայնագրեր | 412,496 | - | - | - | - | - |
| Ներգրաված այլ միջոցներ | - | - | - | - | - | - |
| Ընդամենը | ***454,000*** | **-** | **-** | **-** | **-** | **-** |
| Զուտ դիրք | ***(454,000)*** | **-** | ***184,375*** | **-** | **368,822** | **-** |

Տոկոսային գործիքների միջին տոկոսադրույքը

| Հոդվածի անվանումը | Հաշվետու ժամանակաշրջանի տոկոսադրույքներ | | Նախորդ հաշվետու ժամանակաշրջանի տոկոսադրույքներ | |
|---|---|---|---|---|
| | ՀՀ դրամ | Արտարժույթ | ՀՀ դրամ | Արտարժույթ |
| | % | % | % | % |
| Ակտիվներ | | | | |
| Պահանջներ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ, այդ թվում՝ | | | | |
| -ավանդներ | | 6 | | |
| Առևտրական նպատակով պահվող և վաճառքի համար մատչելի արժեթղթեր | 10.92 | | 10,3 | |
| Պարտավորություններ | | | | |
| Պարտավորություններ բանկերի և այլ ֆին. կազմ. նկատմամբ | 7.78 | 6.5 | 8.66 | |
| Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ | | | | |

37.5 Գնային ռիսկ

Գնային ռիսկը ֆինանսական գործիքի շուկայական գնի փոփոխության հետևանքով կորուստ կրելու հավանականությունն է:

37.6.Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկը պայմանավորված է այնպիսի դրսևորմամբ, որ ընկերությունը կարող է հանդիպել դժվարությունների ֆինանսական գործիքների հետ կապված պարտավորությունները մարելու համար միջոցներ հայթայթելիս:

Այն առաջանում է ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության անհամապատասխանության դեպքում, որը բնական է ֆինանսական հաստատությունների համար, ինչն էլ պայմանավորված է իրականացվող գործարքների տարբերություններով և դրանց հետ կապված անորոշությամբ:

*Հաշվետու ամսաթիվ*

| *ԱԿՏԻՎՆԵՐ* | *Մարմանը մնացել է* | | | | | *Անժամկետ* | *Ընդամենը* |
|---|---|---|---|---|---|---|---|
| | *մինչև 1ամիս* | *1-3 ամիս* | *3-6 ամիս* | *6-12 ամիս* | *1 տարուց ավելի* | | |
| Կանխիկ և կանխիկին հավասարեցված դրամական միջոցներ, մնացորդներ ՀՀ ԿԲ-ում | 1 | | | | | | **1** |
| Պահանջներ բանկերի և այլ ֆին. կազմ. նկատմամբ | 6,737 | *152,357* | | *189,199* | | | **348,293** |
| Արժեթղթեր, այդ թվում՝<br>- առևտրական նպատակով պահվող | | ***14,100***<br>14,100 | | ***9,850***<br>9,850 | **655,850**<br>655,850 | | **679,800**<br>679,800 |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| Պայմանագրային պահանջներ** | | ***28,593*** | ***8,311*** | ***36,904*** | 233,402 | | 307,211 |
| ***Ընդամենը*** | ***6,738*** | ***195,050*** | ***8,311*** | ***235,953*** | ***889,252*** | | ***1,335,304*** |

| ***ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ*** | *Մարմանը մնացել է* | | | | | *Անժամկետ* | *Ընդամենը* |
|---|---|---|---|---|---|---|---|
| | *մինչև 1ամիս* | *1-3 ամիս* | *3-6 ամիս* | *6-12 ամիս* | *1 տարուց ավելի* | | |
| Պարտավորություններ բանկերի և այլ ֆին. կազմ. նկատմամբ | *474,634* | *296,237* | | *188,945* | | | *959,816* |
| Պայմանագրային պարտավորություններ*** | *1,795* | *2,009* | | *6,350* | | | *10,154* |
| ***Ընդամենը*** | ***476,429*** | ***298,246*** | | *6,350* | | | ***969,970*** |

## *Նախորդ ժամանակաշրջան*

| *ԱԿՏԻՎՆԵՐ* | *Մարմանը մնացել է* | | | | | *Անժամկետ* | *Ընդամենը* |
|---|---|---|---|---|---|---|---|
| | *մինչև 1ամիս* | *1-3 ամիս* | *3-6 ամիս* | *6-12 ամիս* | *1 տարուց ավելի* | | |
| Պահանջներ բանկերի և այլ ֆին. կազմ. նկատմամբ | *5,193* | | | | | | ***5,193*** |
| Արժեթղթեր, այդ թվում՝<br>- առևտրական նպատակով պահվող | | | | *50,000*<br>*50,000* | ***481,431***<br>481,431 | | ***531,431***<br>***531,431*** |
| Պայմանագրային պահանջներ** | | *24,202* | *2,156* | *26,044* | 345,258 | | **397,660** |
| *Ընդամենը* | ***5,193*** | ***24,202*** | ***2,156*** | *76,044* | ***826,689*** | | ***934,284*** |

| ***ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ*** | *Մարմանը մնացել է* | | | | | *Անժամկետ* | *Ընդամենը* |
|---|---|---|---|---|---|---|---|
| | *մինչև 1ամիս* | *1-3 ամիս* | *3-6 ամիս* | *6-12 ամիս* | *1 տարուց ավելի* | | |
| Պարտավորություններ բանկերի և այլ ֆին. կազմ. նկատմամբ | 454,000 | | | | | | 454,000 |
| Պայմանագրային պարտավորություններ** | 910,0 | | | | | | |
| ***Ընդամենը*** | ***454,910*** | | | | | | ***454,910*** |

* «Պայմանագրային պահանջներ» տողում լրացվում են դեռևս չհաշվեգրված (հաշվեկշռում կամ հետհաշվեկշռում չարտացոլված), սակայն պայմանագրով նախատեսված ստացվելիք բոլոր գումարները (այդ թվում՝ տոկոսագումարները)՝ ըստ պայմանագրով նախատեսված մարման ժամկետների:

** «Պայմանագրային պարտավորություններ» տողում լրացվում են դեռևս չհաշվեգրված, սակայն պայմանագրով նախատեսված վճարվելիք բոլոր գումարները (այդ թվում՝ տոկոսագումարները)՝ ըստ պայմանագրով նախատեսված մարման ժամկետների:

### Ծանոթագրություն 38. «Կապիտալ և կապիտալի համարժեքություն»

| | 31/12/09 | 30/09/09 | 30/06/09 | 31/03/09 | 31/12/08 |
|---|---|---|---|---|---|
| Կանոնադրական կապիտալ | 150,000 | 150,000 | 150,000 | 150,000 | 150,000 |
| Գլխավոր պահուստ | 600,0 | 600,0 | 600,0 | 100,0 | 100,0 |
| Վերագնահատման պահուստ | | - | - | - | - |
| Ընթացիկ ժամանակաշրջանի չբաշխվածշահույթ | (863) | (739) | 5,402 | (10,039) | 8,418 |
| Նախորդ ժամանակաշրջանի չբաշխվածշահույթ | 2,542 | 3,281 | (2,121) | 8,418 | |

| Ընդամենը | 152,279 | 153,142 | 153,881 | 148,479 | 148,479 |
|---|---|---|---|---|---|

ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 12 փետրվարի 2008թ. թիվ 44-Ն որոշմամբ Ընկերության համար կանոնադրական կապիտալի և ընդհանուր կապիտալի նվազագույն չափ է սահմանված 100 մլն. դրամը: Ստորև ներկայացվում է Ընկերության փաստացի ընդահնուր կապիտալի միջին օրական մեծությունը ըստ ամիսների:

2008թ.

| Ամիսը | Հիմնական կապիտալի Հաշվեկշռային մեծություն | Ընդամենը կապիտալ | Նորմատիվային սեփական կապիտալի հաշվարկի համար անհրաժեշտ հիմնական կապիտալից պակասեցվող գումարներ | Նորմատիվային հաշվարկին մասնակցող Հիմնական կապիտալ |
|---|---|---|---|---|
| Հունվար | 149,917 | 149,917 | 156 | 149,761 |
| Փետրվար | 149,577 | 149,577 | 154 | 149,423 |
| Մարտ | 149,458 | 149,458 | 154 | 149,304 |
| Ապրիլ | 148,549 | 148,549 | 154 | 148,395 |
| Մայիս | 149,030 | 149,030 | 154 | 148,876 |
| Հունիս | 150,334 | 150,334 | 345 | 149,989 |
| Հուլիս | 150,391 | 150,391 | 3,261 | 147,130 |
| Օգոստոս | 149,673 | 149,673 | 3,998 | 145,675 |
| Սեպտեմբեր | 148,836 | 148,836 | 30,447 | 118,389 |
| Հոկտեմբեր | 147,618 | 147,618 | 2,851 | 144,767 |
| Նոյեմբեր | 145,976 | 145,976 | 872 | 145,104 |
| Դեկտեմբեր | 145,949 | 145,949 | 5,423 | 140,526 |

2009թ.

| Ամիսը | Հիմնական կապիտալի Հաշվեկշռային մեծություն | Ընդամենը կապիտալ | Նորմատիվային սեփական կապիտալի հաշվարկի համար անհրաժեշտ հիմնական կապիտալից պակասեցվող գումարներ | Նորմատիվային հաշվարկին մասնակցող Հիմնական կապիտալ |
|---|---|---|---|---|
| Հունվար | 157,873 | 157,873 | 9,998 | 147,875 |
| Փետրվար | 155,904 | 155,904 | 2,484 | 153,420 |
| Մարտ | 154,714 | 154,714 | 118 | 154.595 |
| Ապրիլ | 147,540 | 147,540 | 115 | 147,425 |
| Մայիս | 149,710 | 149,710 | 113 | 149,597 |
| Հունիս | 148,669 | 148,669 | 110 | 148,559 |
| Հուլիս | 153,218 | 153,218 | 107 | 153,111 |
| Օգոստոս | 152,049 | 152,049 | 143 | 151,906 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| Սեպտեմբեր | 151,719 | 151,719 | 102 | 151,617 |
| Հոկտեմբեր | 151,799 | 151,799 | 99 | 151,700 |
| Նոյեմբեր | 149,551 | 149,551 | 96 | 149,455 |
| Դեկտեմբեր | 146,988 | 146,988 | 93 | 146,895 |

**Ծանոթագրություն 39. «Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեք»**

Ընկերությունը ֆինանսական գործիքների իրական արժեքը որոշում է շուկայական գնանշումների հիման վրա: Բոլոր ֆինանսական գործիքները արտացոլված են իրական արժեքներով, բացառությամբ փոխառությունների և վարկերի, որոնք հաշվառվում են ամորտիզացված արժեքով: Դրանց իրական արժեքը գնահատվում է հաշվեկշռային արժեքին մոտ:

**Ծանոթագրություն 40 «Կանխատեսվող ապագա գործարքների հեջավորում»**

31.12.09 թ. դրությամբ կանխատեսվող ապագա գործարքներ առկա չեն եղել:

**Ծանոթագրություն 41. «Ապաճանաչում»**

Հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ փոխանցված ակտիվի ամբողջությամբ կամ դրա մի մասի ապաճանաչման չափանիշներին չբավարարման դեպք չի եղել:

**Ծանոթագրություն 42. «Գրավադրված ակտիվներ»**

31.12.09թ. դրությամբ ընկերության գրավադրված ակտիվներերի, որոնք իրենցից ներկայացնում են «Վալլետտա» ՍՊԸ-ի 331 հատ արժեկտրոնային պարտատոմսեր 50,0 հազ. դրամ անվանական արժեքով, տարեկան 11 տոկոս եկամտաբերությամբ, ինչպես նաև «Արարատբանկ» ԲԲԸ 3788 հատ հիգ հազ. դրամ անվանական արժեքով հասարակ բաժնետոմսեր, հաշվեկշռային արժեքը կազմել է 62,371 հազ. ՀՀ դրամ: Գրավը տրամադրվել է համաձայն վարկային և գրավի պայմանագրերի:

**Ծանոթագրություն 43. «Ընդունված գրավ»**

Ընկերությունը 31.12.09 թ դրությամբ գրավով ապահովված ակտիվներ չի ունեցել:

**Ծանոթագրություն 44. «Պարտավորությունների չկատարում/խախտում»**

31.12.09 թ. դրությամբ ընկերության կողմից պայմանագրային պարտավորությունների խախտում չի եղել: